ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2022 թվականի N 379-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 7-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հունիսի 18-ի N 149-Ա որոշումը, ինչպես նաև 2022 թվականի հոկտեմբերի 31-ին ստացված անամատեղելիության պահանջների խախտման մասին արտաքին ազդարարումը *(հաղորդումը)* **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանում արտաքին ազդարարման հիման վրա *2022 թվականի նոյեմբերի 03-ից* հարուցել վարույթ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ազդարարման համար պատասխանատու անձին՝ ապահովել «Ազդարարման համակարգի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշմամբ սահմանված պահանջների կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի նոյեմբերի 03
ք. Հրազդան